

Մ Ա Ս Ի Ս

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ա.Զ.Գ.Ա.ՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

35-րդ ՏԱՐԻ

1886 ՕԴՈՍՏՈՍ 2

ԹԻԻ 3833

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՇԱԲԱԹ 2 ՕԳՈՍՏՈՍ



ԱՆՇԵՏԱՑԱԾ ՍԵՐՈՒՆԴ ՄԸ

ՄԱՍՆ Բ.

ՄՈՌԱՑՈՒՄ

(Շար. Նախորդ Թուէն)

Անփայթ ու շաղակրատ զուարթութեամբ մը՝ սիրային լուրջ կապակցութեան մ'առաջն առնել ջանացեր և յաճողեր էր ցայնվայր. Տիգրան անոր ընդունելութեան ձեւերուն տակ չէր կրցած յիմարել երկիւղալի անձկութիւն մը. եւ հիմա որ ամուսնոյն խուճալովը գրեթէ միայնակ ու առանձին կը մնար այս երիտասարդին հետ, վտանգը մեծ եւ ահաւոր էր. ո՞վ պիտի պաշտպանէր զինքը տկարութեան, անխոչեմութեան նէր զինքը տկարութեան, անխոչեմութեան վայրկենի մը մէջ. ճակատագիրը կարծես չար սատանայի մը պէս ամէն ջանք ի գործ կը դնէր զինքը փորձելու. բայց գուցէ իրեն շափ մեղքուելու արժանի էր Տիգրանն ալ. Սուրբիկ երեւակայեց զայն երբ լռիկ ու անձայն խոյս կուտար իրմէ եւ երախտագէտ սրտով կը մտածէր այն անձնուէր գոհալուծեան՝ որով երիտասարդն ինքը միայն տանել ուզէր էր զժբաղղ սիրոյ մը բուր տառապանքն. այնպէս թուեցաւ յանկարծ իրեն որ Տիգրան իրեն մօտը կը ծըն-

րադրէր ու ձեռքերը միացուցած սիրոյ ու տառապանաց խոտովանութիւն մը կ'ընէր իրեն, անոր հեշտալի շունչը կարծես թէ կը գգուէր իր դէմքը... Սուրբիկ սթափեցաւ, դուրս ելաւ դողդոջուն եւ պարտիցին զով ու ցրտին հողմն ամոքեց անոր հրատապ ճակատը...

Այսպէս շոր շոր շփոթութիւններ կը պատրաստուէին մօտաւոր ապագայի մը մէջ, ընտանեկան հորիզոնին վրայ սեւ կէտեր կը տեսնուէին, նախակարապետ մեծ ու խոտվայոյզ մրրիկներու...

Արամ էֆէնտի աղաբիւծութենէն վերջն աւելելու եղանակին փոփոխութիւն կրեց. Այս բարեփոխում մարդն՝ այնքան ծանր հարուածի մը ներքեւ ընկճուած՝ գրական պարագմանց տուաւ ինքզինքն ու առանձնացաւ. բայց անխիղճ ու եսասէր մէկը չէր որ իր ճակատագրին բոլոր դառնութիւնն իր ամուսնոյն վրայ ալ բեռնաւորէր. ազատամիտ փրփոտփայ՝ որ իր ընկերական կենաց բոլոր անպատեհ կողմերը կը ճախնար, զիտցեր էր գէթ իր անոյշ բնաւորութեամբ ընդ տարիքի հեռաւորութիւնն՝ որ զինքն իր կնոջմէն կը բաժնէր եւ հիմա բնաւ չէր ուզեր երիտասարդ ու անխորժ կնոջ մը քուսակ տալ անհեռատես որոշման մը հետեւանքը զոր ինքն իր բոլոր փորձառութեամբ չէր գոչակած ատենով:

Ու ստի կնոջը գրեթէ բռնութեամբ հրամայեց իրեն հետ չ'առանձնանալ:

« Ինձ համար որդի մը ու քեզ համար եղբայր մ'է Տիգրան, ըսաւ Սուրբիկի, կ'ուզեմ որ առաջուան պէս ուրախ ու ազատ ապրիք. հարկ չ'է որ ես ալ ընկերանամ անմէն ատեւ ձեզի, ես այսուհետեւ չ'եմ կրնար շարունակ դուրս ելիլ, եւ դուն ինձ հետ բանտարկեալ մը՝ մնար: »

Յորաւի, եղբայր մ'էր Տիգրան Սուրբի-
կին: Այս հեռադէտ մարդն անկեղծու-
թեամբ կընէր այս խօսքերն ու այս ան-
խորհուրդ առաջարկին վրայ չ'էր խորհած
երբէք:

Ոչ, այնքան պարզմիտ մէկը չ'էր որ ա-
ռանց կռուու հետեւանքն այս աստի-
ճանի թոյլտուութիւն ու ազատութիւն շը-
նորհէր իր երիտասարդ կնոջը:

Ծերունի պաշտօնատարը շատ եւ շատ
անգամ խորհած իր ընտանեկան կացու-
թեան վրայ եւ քանիցս զղջացած էր անտես
ըրած լինելուն այն առաջին պայմանն՝ ա-
ռանց որոյ ամուսնութիւնն անհամ կատա-
կերգութիւն մը կը լինի եթէ ողբերգու-
թեան չի դառնայ:

Զջում մը կար այս մարդուն սրտին մէջ.
ճշմարտը խօսելով չ'էր կարող իրեն հետ
հաւատարմաբէս պատասխանատու համարել
իր կինն ալ այս անպատշաճ միացման մէջ և
յանցանքն անդ արմանելի ու մշտապէս կը
ծանրանար իր վրայ միայն:

Մարդ կային արգարութիւնը չ'էր կրնար
դատաւարութիւնը զ'նքն եւ իր տաքնապետ
խղճին ձայնէր միայն զոր կը լսէր որոշ ու
բացարձակ:

Այն վայրկեանէն, այս տարօրինակ մարդն
որոշէր էր իր կնոջ վերադարձնել անոր ա-
զատութիւնն եւ կերպով մը թեթեւցնել ե-
թէ ոչ դարմանել իր գործած սխալը:

Արհամարհելով ընկերութեան բոլոր չա-
րախօսութիւններն ու նախապաշարունակներն,
սիրտին մը սիրտի ունենալով, եթէ իր կինն
առանց խտրելու պատուոյ ճամբէն կարե-
նար իրեն տարեկից ու առաքիյի երիտա-
սարդի մը բարեկամական գորովով մոռնալ
եւ իր երեսին չի զարնել զինքն յաւիտենա-
կան թշուառութեան մը մատնած լինելու
յանցանքը:

Անշուշտ Սուրբիկ եւ ոչ մէկ ժամանակ
առիթ տուած էր իր ամուսնոյն զգոհու-
թիւն կամ յանդիմանութիւն մը կարգաւ
իր դէմքին վրայ. բայց այս լրին համակեր-
պութիւնը գանգատող ձայնէ մ'աւելի ծանր
եկած էր միշտ անոր սրտին:

Թէ որ ամուսնալիութիւնն ընդունելի
լինէր մեր կրօնական օրէնսդրութեան մէջ,
Արամ Էֆէնտի բռնութեամբ սիրտի բաժ-
նուէր իր կնոջմէն. ու քանի որ օրէնքը

կաշկանդող ու բռնադատող էր, իրեն կի-
նար կարելիութեան ու պատշաճութեան
սահմանին մէջ անտանելի չի դարձնել ա-
մուսնական լուծը:

— Արի՞ կ'սպասես ամուսնանալու հա-
մար, կ'ըսէր օր մը Տիգրանին. չ'ըլլայ որ
երիտասարդութիւնդ անցունելէ վերջն ինձ
նման հիւանդ ու կարօտ օրերուդ օգնական
մը փնտռելու համար միայն ամուսնանալու
եղնես: Տարիքն առնելէն վերջն երիտասար-
դուհւոյ մը հետ ամուսնացող մարդը կը
նմանի ծովի ինկող անձի մը՝ ոտքէն կապ-
ուած ծանր գնտակին որ իր երիտասարդ
կինը միասին կը տանի թշուառութեան ան-
դունդը:

Մինչեւ այն ատեն իր կնոջ եւ ոչ մէկ
փափագին հակառակէր էր. Սուրբիկին ա-
մէնէն շնչին հաճոյքն իրրեւ պարտականու-
թիւն մը ի գործ դրած էր միշտ եւ ասից
վերջը մի և նոյն բարեսրտութիւնն ու թոյլ-
տուութիւնը տալու հարկը ճանչցաւ:

Այս ձեռով Տիգրան աւելի մեծ ազո-
տութիւն մը վայելեց Սուրբիկին բով. իր
բոլոր բարեկամութեան հակառակ, այս էր
մարդկային սրտի տկարութիւնն, գրե-
թէ գոհութեամբ տեսաւ Արամ Էֆէնտի
մենաւոր մնալը. բայց զայն առանձին չի
թողուց. երբոր Արամ Էֆէնտի իր աշխա-
տութեան սենեկէն դուրս ելնէր, Տիգրան
անոր բով կը կենար միշտ ու մերթ գրա-
ւոր խօսակցութեամբ և մերթ պէջ'կի խա-
ղով կ'անցունէին միասին քանի մը ժամեր:

Խոսքով տուով յառաջացեր էր իր կան.
խորոշ ճամբուն մէջ. դատաւորական աս-
պարէզն, օրինական ճշգրտութեամբ սահմանա-
փակ գտնուելով, առաջուց ի վեր անյար-
մար թուած էր իրեն. ուստի շուտով թո-
ղուց իր ընդհանուր դատախազի օգնականի
պաշտօնը վարչային բարձրագոյն պաշտօնի
մը փոխարէն:

Այս երիտասարդը՝ դիւրին ու արագ յա-
ռաջացիւթեան մը անհրաժեշտ եղող բո-
լոր պայմաններն իր անձին վրայ կը բո-
վանդակէր:

Միանգամայն յաջող ամուսնութեամբ մը
իր դրամական կացութիւնն ապահովեր էր:

առանց վարանելու ամուսնանալով հարուստ ու գեղանի աղջկան մը հետ որոյ բոլոր պահասութիւնն՝ ատենով հայրենի տունէն փախուստ տուած լինիլն էր երիտասարդ դասատւին հետ։ Հաջորդ տարի օգիտ պիտի տար անոր հայրը՝ մեծահամբաւ զրամատէս մի որ կառավարութիւնն ու հաւարակութիւնը կողակեցելով ձեռք բերած էր իր հարստութիւնն և զոր քրտինքով ու պատուով ձեռք բերուած կ'անուանէր։ Սակայն հակառակ իր մեծ դիրքին ոչ ոք իր աղջիկն ամուսնութեան ուղած էր եւ անոր աղմկալից անցեալն ատեն անցնելով մոռցուած չէր։

Խոսքովի պէս դրամի կարօտ ու պատուոյ մասին ներողամիտ անձ մը միայն անոր ամուսին կրնար լինիլ։ Բարձրանալու մշտապէս տենչէն բռնուող այս մարդուն աչքին ամէն ինչ՝ բարեկամութիւն կամ ամուսնութիւն՝ միայն իր մեծութեան գաղափարներուն նպաստելուն համար գոյութիւն ունեցող բաներ էին։

Նորա կինը պէտք էր նախ և առաջ դրամի տէր լինիլ, երկրորդ՝ սրահի մը մէջ խօսակցելու չափ կրթեալ մէկն ըլլալ։ Եւ Խոսքով այս մշտութեան մէջ անկէ անգին չի նայեցաւ։

Շիտակն ըսելով իր կինը կատարելապէս յարմարեր էր այս տարօրինակ մարդուն։ Եւ գինէ վառ ու խռովեալ երեւակայութեան տէր, յամառ ու արտակարգ աղջիկ մ'էր։

Ճարտար դաշնակահար, լաւ գծագրիչ, ինչպէս որ կը տեսնուէր իր ներքնասենեակի պատերէն զորս իր մատիտին արտադրութեամբը միայն զարդարեր էր, այս կինն ամէն բանէ առաջ իր անկախութեան սիրահար մէկն էր։ Շարունակ ֆուսնական վէպեր կարդալով՝ անոր ըմբոստ բնաւորութիւնը բոլորովին անգուսպ ու յիմարական բան մը դարձեր էր։ Թաքուն, անձայն ու անշուշտ սիրահարութիւն մը՝ անոր զրուանք պիտի ազդէր։ Ընդհակառակն առեւանգութեան, բռնութեան, սպանութեան կամ թունաւորման վախերով լեցուն ու գայթակղալի հոգակ ունենալիք ամէն տրիտ անոր պիտի յաղթէր։

Անոր ազատութեան ու անկախութեան փախազը՝ բռնաւոր տարփառօրի մը գերին լինելու տենչանքն էր միայն եւ ոչ ուրիշ բան։ Այս կնոջ հետ հաշտ կենցաղի յոյսն

անկարելի էր։ անոր կամ տէրը կամ ստրուկը պէտք էր լինիլ։

Իր արկածալից երիտասարդութիւնը միշտ չափազանց ներողութեան մը արժանացած էր հօրը կողմէն որ անհաւատալի տխրութեամբ կը սիրէր այս աղջիկին։

Եւ գինէի ամուսին լինելիք մարդը պարտ էր առաջուց աչքն առնել անոր լուծին տուկալը, զոնէ անոր բացարձակ անկախութիւնը ճանչնալը։ Խոսքով այս վիճակն անրդունելի չի նկատեց։ չէնք շնորհք Եւ գինէի երեսն անգամ նայած չէր։ Կապոյտ աշուի էր թէ սեւ աշուի։ անոր մազերը խորտեալ էին թէ շագանակագոյն։ Բերանը փոքր էր թէ մեծ, շիտակը շատ աղէկ չէր գիտեր։ Խիստ լաւ գիտէր սակայն որ իրեն տրուելիք օժիտը նշանտուութեան օրէն իր տրամադրութեան ներքեւ պիտի զտնուէր ու այս բաւ էր անոր։

Ամուսնութեան առաջին ամիսները փոխադարձ ու գերազանց անտարբերութեամբ հետեւապէս եւ անգորրութեամբ անցաւ, մինչեւ որ Խոսքով անգամ մը իր ամուսնական իշխանութիւնն ի փորձ դնել ուզեց։

Տիկնոջ երիտասարդ մէկ ազգականը՝ Խոսքովի տան սովորական եւ ամենօրեայ այցելուներէն մէկը դարձեր էր։ այս տղան՝ վաճառականի մը ըով զրազիւր, որ իր շարաթականն իր զգեստներուն միայն կը յատկացնէր, բաւական վայելչադէմ ու խարտիչահար մէկն էր զոր չոր լեզունները կը պնդէին թէ Աննիկի վաղեմի ու արդի մէկ մտերիմը լինէր։ Այս լուրը շուտ հասեր էր Խոսքովի ականջը, բայց չէր ուղած անորոյ ու տարտամ կասկածի մը վրայ իր դուռը փակել անոր դէմ, նամանաւանդ ամուսնութեան առջի օրերը։ Տանը մէջ բռնաւ կարեւորութիւն տուած չէր անոր։ առջի տեսութենէն մէկ երկու բառով հասկըցեր էր որ, զգեստներու գլխէն ի վատ, այս անձն ոչխարի մը պէս անմիտ ու վայրենի մը չափ տղէտ արարած մ'էր։ Այս տխմար էական Աննիկի մը պէս կնոջ տարփառը չէր կրնար ըլլալ։

Սակայն ի սկզբան անգիտաւ նկատուած այս արարածը՝ քիչ քիչ Խոսքովի անտանելի թուեցաւ։ իր հակակրօթիւնն այնչափ աւելցաւ որչափ իր կինն այս աստիճանի ա-

պու ի մի վրայ տարօրինակ դորով ու սքանչացում կը յայտնէր :

Խօսքի պզտի մ.նամարտով մը սկսաւ այր ու կնոյ մէջ այս երիտասարդին վէճը :

Այնիկ անոր ճաշակն ու վայելչութիւնը կը գովէր :

— Այդ զարմանամ, ըսաւ անոր ամուսինըն, այդ անհամ պարտէն ասործելուդ :

— Ինչո՞ւ ըլլայ անհամ, միթէ համով ըլլալու համար պէտք է անպատճառ քաղաքական կամ ուսումնական նիւթերու վրայ ճառել ձեզի պէտք մեղք՝ կանայքս՝ այդ տեսակ բաներէ չ'ենք հասկնար, ամէն մարդ իր ճաշակն ունի :

— Այդ խօսքը քու հմտութեանդ յարմար չ'է. դու ուսեալ կին մ'ես եւ շարունակ քուրճի վրայ խօսիլը դատարկ գլուխ կանանց յատուկ է :

Քանի մ'որ վերջը խօսքը նորէն բացուեցաւ բայց այս անգամ աւելի կծու կերպով :

— Ձեմ կարծեր որ յատկապէս ինձ հակառակելու համար այդ անպիտան անձն հոս յաճախել կուտաս. անցեալ օրուան դիտողութենէն ի վեր այդ պարոնն օրը երեք անգամ գալ սկսաւ :

— Ամենեւին. միայն կը խնդրեմ որ այդքան չնչին բանի մը համար խնդիր չի հանէք. որովհետեւ շատ կանուխ է դեռ, աւելցուց հեղ նութեամբ. վեց ամիս չ'եղաւ ամուսնանալիս եւ նախանձօտ Օթէլլայի դերը ծիծաղելի կ'ըլլայ :

Խօսքով բարկացաւ բայց ինքզինքը զըսպեց :

— Համբերութեամբ մտիկ ընել պարտաւոր եմ որովհետեւ քեզմէ մեծ եմ. քեզ նկատմամբ մինչեւ հիմա ունեցած անտարբերութիւնս աննախանձ ըլլալս կը հաստատէ, կը պահանջեմ միայն որ պատշաճութիւնը ճանչնաս, ըսաւ ցուրտ կերպով ու դուրս ելաւ սենեակէն :

Ի՞նչ տեսակ էին Եւգինէի յարաբերութիւններն այս երիտասարդին հետ որ Արմենակ կը կոչուէր. արգարութիւնն յարգելու համար պարտաւոր ենք յայտնել որ անպատշաճ կապակցութեան ամէն զրոյց բոլորովին անհիմն էր :

Եւգինէ չ'էր սիրեր ու չ'էր կրնար սիրել այս տխմարը բայց տխմարութիւնն ալ իր հաճելի կողմն ունէր :

Արմենակ Եւգինէն կարեւալ սիրելու մեծամտութիւնը չ'ունէր բայց անոր հետ տեսնուիլն, հասարակաց տեղ մը անոր հետ միասին ժուռ գալն իրեն շատ էր ու քիչ չ'էր :

Մինչեւ իր էրկանը դիտողութեան պահուն, Եւգինէ այս տղուն հետ կ'զրօտուէր, անոր վրայ կը ձիծաղէր, կը խնդար, բայց գէշ աչքով մը նայած չ'էր անոր. սակայն իր էրկանը ընդդիմութիւնն անոր իրեն պատերազմաւէր ոգին արթնցուց. նա մանաւանդ անոր խօսքին վերջին պարբերութիւնը խիստ վերաւորիչ դատեց. « Բեզ նկատմամբ ունեցած անտարբերութիւնս աննախանձ ըլլալը կը հաստատէ » ըսեր էր անտարբերութիւնն... Եւգինէ իր ամուսնոյն համար ուրիշ զգացում ունեցած չ'էր. բայց ամուսինն իր մասին անտարբեր ըլլալու իրաւունք չ'ունէր եւ որոշեց այդ անտարբերութիւնը խորտակել :

Ի շնորհ Եւգինէի բերած օժիտին եւ իր ամուսնական Խօսքով Պոլսոյ առաջնակարգ էֆէնդիներէն մէկն էր հիմա. իր կնոյ բերած գումարը քօնսօլիտէի խաղով ստացուած մէկ երկու յաջողութեամբ կրկնապատկուած ու եռապատկուած էր եւ Խօսքով՝ շահագիտութեան մէջ յանդուգն ու անվախ վերջին բաղդով մը մեծ հարստութիւն մը չ'իյնել ու այնպէս քաջուիլ կ'ուզէր այդ վտանգաւոր խաղէն :

Մէկ օրուան մէջ հարիւր ոսկի շահիլ կամ կորսնցնելու վարժուող մարդ մը խնայողութեան տէր չ'էր կրնար լինիլ ու Խօսքովի քօնսօլիտէի ելեւէջին պատճառած շահերուն մէջ իր տանը համար ըրած մեծ ծախքը չնչին բան մ'էր :

Կարօտութեան մէջ նուաստ ու ստրուկ եղողն հարստութեան մէջ ամբարտաւան կ'ըլլայ. Խօսքով հազարաւոր ոսկիներուն հաշուոց հետ շուտով հինաւուրց ագնուականի մը բոլոր ձեւերը սորված էր :

Այս էֆէնդիին մոռցած էր անշուշտ հայրենիքէն հետիոտն Պոլիս գալը կամ տնտեսապար աւելցուկ հացի կտորներն, երբ իր հիւրերուն զանգատող ձայնով մը Հեռալին եւ Պիւռլիին կօշիկներէն կամ Լըպօնին կերակուրներէն կը դժգոհար :

Իր ազգային գաղափարաց գալով, իբրեւ նորահաս հարուստ մը՝ վաւշութեան, ժո-

զոգոց եւ երեսփոխանաց վրայ ծիծաղելու իրաւունք ունէր . բայց Խոսրով խորամանկ փառասէր մ'էր որ այդ ժողովոց մէջ ձայն ու իշխանութիւն ունենալը չ'արհամարհեց :

Առաջին պաշտօնատարը չ'էր նա (և անտարակոյս վերջինն ալ չի սլիտի ըլլար) որ ազգին մէջ ազդեցութիւն ունենալն՝ իր զիրքին օգտակար կերպով ծառայեցնելու գաղափարն յղացեր էր : Այս օրինաւոր ակնկալութիւնն՝ ի վաղուց անտի շատ քիչ անգամ ի դերեւ ելած է որպէս զի նորեկներ ազոր ճշմարտութիւնը չ'ըմբռնեն :

Մէկ նամակով Խոսրով իր հայրենիքէն երեսփոխան ընտրել առաւ ինքզինքն Ազգային ժողովին , իսկ հոն խոհեմութիւնը ձեռքէ չի թողուց ու խորագէտ ճարտարութեամբ ձեռք բերաւ ազատամիտ ու ժողովրդական երեսփոխանի անունը զոր պաշտօնատար երեսփոխանները խիստ բիշ անգամ ստացած են :

Ժողովին ամէն նիստերուն ներկայ , ներկայ նախապատրաստական գումարումներու , ամէն վիճարանութեանց մասնակից , իր դիւանին մէջ տեղեկաբեր , հանգանակութեանց մէջ կարգող իր մասնախմբի անգամ , Խոսրով ԼՓէլտին Ազգային ժողովուրդին գործունէայ ու ազդեցիկ անդամներէն մէկը դարձաւ :

Ամէնքը միարեւոյն կը գովէին այս մ. ր. զըն որ ազգին վնասերու կարողութեամբ հանգերձ այնքան անձնուէր կը ծառայէր անոր :

Այս համբաւը՝ զր անաղարտ կը կարծէր , ստանալէ յետոյ սկսաւ իւր շահատակութիւններն : Իր ձայնն շեղահատ խորատու եւ հոգարտ հակառակ կարճեաց տէր երեսփոխաններն արհամարհանօք ու սպառնալեօք կը սաստէր : Ո՞վ էին այն անդիտան մարդիկն որ կը համարձակէին իրեն զէմ խօսիլ . գիտէի՞ն որ կարող էր զիրենք մինչեւ յաքսոր մատնել :

Խոսրովի ծրագիրներն ի գործ դրուելու մօտ էին . միայն իր ընտանեկան կենաց խռովութիւններն աճեր ու բազմապատկեր էին երթալով :

Ինչպէս ըսինք Եգիպտէ իր էրկանն անտարբերութեանը յաղթելու համար անոր նախանձը շարժել որոշեր էր : Ոչնչ այնքան անխախտելի է որքան կանացի որոշումն :

Այն վայրկեանէն սկսելով Նազինէ չ'էր թերացիր , իր ամուսինը կատղեցնելու համար , ի գործ դնելու այն ամէն փոքրիկ կամ մեծ , անփնաս կամ վնասակար միջոցներն որ կանոնց պատերազմի համարը կը կազմեն :

Այն երիտասարդն ամէն օր հրաւիրել , իր ոտքին բով նստեցնել , գլխի վայր փութսալ անոր ականջն ի վայր , թեւը մտնել շրջագայութեան համար ու կոթնիլ անոր թեւին ամէնուն ուշադրութիւնը հրաւիրելու չափ . ու երբ ասոնք անբաւական դատուեցան , նամակադրութիւն մ'սկսիլ անվերջանալի , օրն իրիկուն տոմսակներու տարուբերին դառնեցնել ծառայները , ծաղկանց փունջեր պատրաստել տալ , զրկել եւ ընդունիլ ու վերջս պէս կղզին կամ Պէոյիւքտէրէ կամ ուրիշ հեռու տեղեր ժամադրութիւններ կարգողը , ահա Նազինէի ռազմագիտական միջոցներն :

Խոսրովի՝ քիչ քիչ անհանդուրժելի երեւցաւ իր կնոջ ընթացքը : Արեւելի անպաշտ դառնալ սկսեր էին . բայց Նազինէ պատերազմէ փոխուստ տուող չ'էր , ընդհակառակն . արդէն քօնօղիտէի մէջ մի քանի մեծ կորուստներ Խոսրովի բնաւորութիւնը բոլորովին դառնացուցեր ու համբերութեան չափը լեցուցեր էին : Տանն անկարգութիւնն ու անխնամութիւնն որ շոյալութեան ծայրագոյն աստիճանի հասեր էր , իր կնոջ մասին ամէն մանրամասնութիւններով յեղձիղուած ամօթալի պատմութիւններ , ոնտանեկան յարկին կործանման ապաշով նշաններն էին : Խոսրով թէեւ երբէք չ'էր սիրած , չ'էր ասորժած իր կնոջմէն , բայց բիշ մ'ալ սպասել որոշեց :

Դրամական կորուստներն ու ձախորդութիւնն որ քանի մ' ամսէ ի վեր զինքը կը հալածէին , պաշտանի յառաջող իմութեամբ փոխարինել որոշեց . իր ամուսնունը ներկայ վիճակին մէջ անբաւական դարձեր էր նոյն իսկ իր կնոջ զարդարանացն ու պարտքը զիջուեր էր չորս գին . ամսականի ու պաշտօնի բարձրացումը փրկութեան միակ ճամբան էր . դեռ ոչ ոք գիտէր անոր նեղութեան մէջ գտնուիլն . ամէնքը գիտէր հարուստ ու ազդեցիկ գիտէին . ժամ էր ազէկ ու արտաքոյ կարգի վարդետութեամբ մը վերստին հաստատել իր կորսուելու մօտ եղող գիրքը . Խոսրով ազգային գործոց դարձուց իր հետաքննին ակնարկն :

Որ մէկին խոստումս, որ մէկին սպառնալեօք, որ մէկին համոզմամբ Խոսրով յաջողած էր արդէն կուսակցութիւն մը կազմել ժողովոյն մէջ, որ իր գաղափարներն ի գլուխ ախտի հանէր:

Սահմանադրութեան վերաքննութեան վիճարանութիւնը տեղի կ'ունենար: Խոսրով՝ պարզապէս զայն ջնջելու համոզումը յայտնեց. իր կարծեօք, Քաղաքական ժողովը կը բաւէր ամէն ինչ տնօրինելու. ինչ պէտք այս վարչախօս երեսօխոսանաց որոցմէ օգուտ չի կար. տասն եւ վեց տարուան փորձը մէջ տեղն էր իր համոզումն հաստատելու: Միւս կողմէ ազլային վարժարաններու պէտք չի կար որք աւելորդ ծախք մը ու հոգ մ'էին ազգին գլխուն:

Այն ատենուան մարդիկն հիմախուաններուն չափ անսիրտ ու անհոգի չ'էին:

Նախ աղչութեամբ մոխի ըրին այս նոր վարդապետութեան ու յետոյ որոտայից ընդմիջում մը ատենարանին խօսքը կտրեց:

— Մի՛ մեղանչէ՛ք Սահմանադրութեան դէմ, կը պաշտպանուէր ունկնդիրներն հազիւ զսպելով իրենց զայրայթը:

— Ի կարգ, ի կարգ, կը գոչէին երեսօխոսաններն յոտին կանցնած:

— Շարունակեցէ՛ք, էֆէ՛նտի, կը պատասխանէին միւս կողմէ Խոսրովի կուսակիցները:

Խոսրով այս ընդհանուր խռովութեան մէջ չի տկարացաւ. այլ թեւերը խաչածեւ միացնելով իր կուրծքին վրայ:

— Պիտի սպասեմ հոս որ Դիւանը գոնէ խօսքի ազատութիւնն յարգել տայ, ըսաւ նա. չ'եմ կարծեր, աւելցուց սպառնալից ակնարկութեամբ ունկնդիր ամբոխին, որ խուժանին յարձակմանց դէմ մեր անձերը պաշտպանելու համար կառավարութեան միջամտութեան դիմելու հարկադրէք զմեզ, Ատենապետ էֆէնտի:

Ատենապետին զանգակին ձայնն աղմուկին հետ կը շարունակուէր ու անկեղծ կը դառնար:

Ամէնէն կոյտ անականներն, ամէնէն ծանր խօսքերն իրարու դէմ կը փոխանակուէին. Դիւանը չուարած ի զուր լուծիւն կը պահանջէր:

ԳԻՒՌՈՐ ԶՈՂՐԱՊ
(Ծրուակէի)

ԱՐՇԵՍՏԱԿԱՆ

ՅԱՐԱԶԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

ԵՒ

ԺԱՔԱՐԻ ՈՍՏԱՅՆԱՆԿ ՄԵՔԵՆԱՅՆ

Տարազագործութիւնն այն արհեստն է որ կը պատրաստէ մօր կենաց հարկաւոր եղած այնքան կարեւոր առարկայներն, ինչպէս են կտաններն եւ կերպասներն. այն անձն որ կ'գրադի տարազագործութեամբ կը կրչուի տարազագործ կամ լոկ ոստայնանկ, այս վերջինն աւելի ընդհանուր առմամբ կըրնայ գործածուիլ:

Թէ ե՞րբ սկսած են կտաւ գործել, ժամանակը չէ յայտնի, վասն զի ի հնագոյն դարս կը տեսնուին կտաններ, իսկ նուրբ կերպասներ Հռովմայեցւոց ժամանակ միայն կը տեսնուին: Այնուհետեւ տարազագործութիւնը ծաղկելով տալաւ առ տալաւ ծնունդ տուաւ այլ եւ այլ հիւսուածներու:

Կարելի չը լինելով հոս ոստայնանկի մը բոլոր գործողութիւններն ամփոփել, ընդհանուր հայուածք մը բաւ կը համարինք:

Ծանօթ է ամենուս թէ տարազագործութեան բնական վարպետը սարդն է, որ իր տկար ոստայնն այնքան ճարտարութեամբ կը հիւսէ, որմէ գոյացած հիւսուածն, ճերկ, բազնտիս նրբադոյն հիւսուածն, կը դիմադրէ ճանճերու զօրութեան. նմանապէս եւ մարդիկ օրինակելով սարդի այս գործողութիւնն, աշխարհիս այս մեծագոյն արհեստին խարխիսն ըրած են:

Մարդիկ սակայն զուրկ լինելով ոստայնէ, ջանացած են բնութեան մէջ որոնել հիւսուածներու յարմար նրբաթելեր, եւ յաջողած են բազմաթիւ տեսակներ գտնելու. սոյն նրբաթելերու յատկութեան համեմատ տարազներ ջինուած են, ուստի ոստայնանկութիւնն ուղղակի յարաբերութիւն ունենալով հիւսելի նրբաթելերու հետ, կ'արժէ որ համառօտ տեսութիւն մ'ընենք:

Հիւսելի նրբաթելեր իրենց ծագումով երեք խումբերու կը բաժնուին, ինչպէս.

1⁰. Կենդանային թելեր, որպէս են, բուրդ եւ մետաքս :

2⁰. Բուսային թելեր, որպէս են, բամպակ, կանեփ եւ վուշ :

3⁰. Հանքային թելեր, որպէս են, ամիանդ եւ ասպէսթ :

Առաջինը կարեւորագոյններն են թէ՛ տոկոսնութեամբ եւ թէ՛ իրենց պարունակած բորակածնի բանակութեամբ :

Բուսայինը նշանաւոր են իրենք շատութեամբ. Թորպ Ռոյլի հեղինակութեան մէջ կը տեսնուին 200 տեսակէ աւելի նրբաթելեր որք Հնդկաստանի մէջ կը գործածուին, եւ երբ մօտեցաւ Պէրնարտէնի հաստարակած 550 նրբաթելաց ցուցակը բռնեհը, այն ատեն միայն գաղափար կրնանք կազմել թէ բացի մեր երեք բուսային նրբաթելերէ, բամպակէ, կանեփէ եւ վուշէ, օգտակարապէս գործածուելու համար տակաւին հարիւրաւոր նիւթեր մեզ կ'ըսպանին :

Գալով հանքային նրբաթելերու, ամիանթն եւ ասպէսթն, որք զխաւոր ներկայացուցիչք են սոյն խումբին, տակաւին ասանք գործնական օգուտ մը չ'ունեցան : Սա յայտնի է որ հին ժամանակներն ամիանթէ գործուած կտաներու մէջ կ'այրէին մեռեալները. ամիանթն որ չ'այրիր, դիակին աճիւններն ամբողջովին կ'սպառէր իր մէջ. իսկ մօտ ժամանակներս ինչպէս գրուեցաւ լրագրաց մէջ անկէզ թուղթ շինեցին ամիանթէ : Ասպէսթն ամիանթի գրեթէ նմանն է եւ չ'ունի յիշատակուելու արժանի մասնաւոր յատկութիւն մը :

Արդ այսպիսի ինչ բաւ համարելով նրբաթելաց մասին քննեհը կտաւի մը թելերու հիւսուածն. առնուիք պարզագոյնն ի կտաւս որ է անդուսն (ճանթէս) զոր մօտեցընելով մեր խոշորացոյցին կը տեսնենք երկու ուղղութեամբ թելեր գիրար ուղիղ անկիւններով հատած. այս թելերու խիտ կարգը կը կոչուի աւել (չէզկի) եւ նուազ խիտ կարգն որ ձախէն աջ եւ աջէն ձախ ձգուած միակտուր թել մ'է եւ որ կ'իւցին միջոցաւ առէջի թելերուն միոյն տակէն եւ միւսին վրայէն յաջորդաբար անցած է, կը կոչուի Բէշմ (աթիլ) :

Ինչպէս տեսանք, անդուսը, նոյնպէս ամենահասարակ կտաւէն մինչեւ մետաքսայ

ամենայարգի կտաւներ առէջէ եւ թեզանէ կը բաղկանան եւ նոցա ազնուութեան համեմատ կտաւք իրարմէ կը տարբերին, սակայն ընդհանրապէս կտաւի մը գեղեցիկութիւնն ի վեր հանուին առէջը լինելուն սովորաբար լաւագոյն թելեր այն պտշոտնին կը յատկացուին. իսկ թեզանը շատ անգամ ծածկուած գոլով առէջներու ներքեւ ստորին թելեր կը լինին :

Ի հին դարս երբ կ'իւցը չէին դիտեր, մեծ գժուարութեամբ կը բռնէին. սակայն երբ կ'ըզն հնարեցին եւ փոփոխապէս առէջին թելերը վեր վարը ելու համար աւալերն (շիրէ) հնարեցին, խնդիրը շատ դիւրացաւ, այնպէս որ կոխանի վրայ ոտքի ճնշումով մը կտաւի երեսը գալիք բոլոր առէջներ կը բարձրանան եւ առէջներու միւս կէտը վարը կը մնայ. այսինքն ըսենք թէ 1,000 թել առէջ ունի կտաւն իր լայնքին. 500ը բարձրանալով 500ը վարը կը մնայ եւ կ'ըզն նոցա մէջտեղէն կ'անցուի թեզանը. ապա միւս կոխանով տակը մնացած առէջներ կը բարձրանան ու այսպէս յաջորդաբար :

Ժամանակաւ տարազազ ործութիւնը խիտ ծաղկած էր յ'Արեւելս, եւ ադար ապագայցք ցարդ կան եւ կը մնան. վրայ են մեր վանքերու այն մետաքսաւէջ եւ ոսկեթելան յարգի շուրջաւներն որոց մէջէն կարելի է գտնել ոտայնանկութեան հրաշալիքներ. անոնցմով նաեւ կրնանք գաղափար մը կազմել մեր նախնեաց արհեստին նրբութեան եւ ճաշակին փափկութեան վրայ. տակաւին մինչեւ այսօր Մշեցոց ձեռագործները պատուաւոր դիրք մը զբաւած են, եւ Պարսկաստանի, Քաշմիրի հանրածանօթ շալեր եւ կտաւներ Եւրոպացոց զարմացում կ'ազդեն : Այս տողերէն չ'ենք կրնար սակայն հետեւցնել թէ Եւրոպա տարազազ ործութեան մէջ զԱրեւելք չէ գերազանցած, միայն ի դէպ է յիշել հոս թէ տարազազ ործութիւնը լուսանկարի, հեռագրի եւ տարբարանական շատ մը հնարման նման եւրոպական ծագում չ'ունի բնաւ, եւ թէ ասկէ 80-160 տարի առաջ բուն արհեստն Արեւելքի մէջ էր : Եւրոպա իւր մեքենայից զօրութեամբ խլեց զայն եւ դնոց նուազումով այս վիճակին հասնոց Արեւելքի ոտայնանկութեան այն հսկայ համբեարութիւն :

ներն : Մինչեւ այսօր յիշողներ կան թէ Փոքր Ասիոյ խորքերէն մեծ քանակութեամբ պարզ սպիտակ կտաւ կուգար Պոլիս երբ տակաւին ափերէն գոյութիւն չունէր Պոլսոյ հըրապարակին վրայ , նոյնպէս եւ մի քանի տասնեակ տարիներ առաջ Սելիմիէի հաշակաւոր մետաքսեղէններով համակ լեցուն էին մեր շուկայներ երբ Եւրոպայի տարազք միօրինակութեամբ եւ դնոց աժանութեամբ գերազանցապէս եկան յաջորդ եւ անոնց :

Տարազագործութիւնն Եւրոպայի մէջ 17-րդ դարուն սկսաւ յառաջանալ , յորում ժաբատ անունով գործաւոր մը իր համանունն մեքենայն հնարեց :

Ժաբատ Լիանցի կտուագործն 1732ին ծնած է 1836ին մեռած է : Իր ժամանակը ծաղկեակար կերպաները մեծ գոռաբուլթեամբ կը գործէին , (մինչեւ այսօր տակաւին Սուրբ կողմեր նախնական կերպով գործողներ կան) , այս գոռաբուլթիւնք երկուքն ժամանակ ժաբատի ուշադրութիւնը գրաւած էին որ մի դիրքին եղանակ կը մըտած էր : 1801ին իւր յղացած մեքենայն շինելով , տեսնուեցաւ որ երեք գործաւորներու բանելիք կերպասն միայն մի գործաւոր կարող էր բանիլ , ինչպէս բնական էր այն ժամանակներ , իւր գիւտը լաւ ընդունելութիւն չը գտաւ որով եւ ստիպուեցաւ Անգլիա երթալ ուր գրկաբաց ընդունեցին զինք եւ սկսան շահագործել իւր գիւտն . հայրենասիրութենէն մղուած վերագործաւ ի Ֆրանսա ուր Պատուոյ Լէգէոնի նըշանով մեծարուելով թոշակ ստանալուեցաւ իրեն :

Ժաբատի մեքենայն առանց ձեւերու եւ մանրամասնութեան բացատրել կարելի չը լինելով անոր մի քանի կատարելութիւնները թուելով բաւականանք :

Հին գրութեամբ կերպաս մը օրինակի համար եթէ քան կամ երեսուն կոխանի (այսինքն) պէտք ունէր , ժաբատի մեքենայով մի կոխան բաւ է . իսկ աս պերուն գաղով որք այնքան տեղ կը բռնեն եւ մեծ գոռաբուլթեամբ ճախարակներով կը բարձրացուէին այժմ կերպասին տրուելիք պատկերին քառակուսիներուն համեմատ կարթերու միջոցաւ կը բարձրացունեն եւ այս շարժումներ կոխանը ծակեալ թուղթերու զւանին միջոցաւ կը հողորդէ կաթիլներուն :

Ժաբատի մեքենայով նաեւս ամենանորբ պատկերներ ճշգիւ կրնան բանուիլ կերպասին վրայ այնպէս որ անվարժ աչք մը մինչեւ անգամ տպածոյի հետ կը շփոթէ զայն :

Ժաբատի մեքենային հնարումէն վերջ մեքենական տարազագործութիւնն հսկայաբայլ յառաջադիմեց , այնպէս որ այսօր զիրար գերազանցող բազմատեսակ ինքնաշարժ մեքենայներ հնարուեցան : Շոգաւոյ կամ ելեկտրական զօրութեամբ բանող ոտտայնակ մեքենայ մի երբ այցելեցը կը տեսնենք թէ ինչպէս ասպի կը բարձրանան եւ կ'իջնան , կ'ույն իւր հորիզոնական երթեւեկութիւնն կը կատարէ , սանտրն կը հեռանայ եւ ուղուած զօրութեամբ կուգայ կը տեղաւորէ թեզանն , առաջակողմեան զլանն ինքնիրեն կը փոխէ բանուած կտաւն եւ եւ այս ամենն մեքենական ճշգրտութեամբ լինելուն կրնանք երեւակայել իւր արդիւնքի եւս միօրինակութիւնն :

Ինչպէս բոլոր արհեստներ նոյնպէս եւ տարազագործութիւնն առաւել քան զամենեւեան աշխատութեան բաժանման սկզբան ելթարկուած է , այնպէս որ յԵւրոպա տարազագործութիւնն իրեն յարակից եղող այլ եւ այլ գործողութիւններ իբր մասնաւոր արհեստ կը նկատէ եւ հետեւաբար զատ գործարաններ հիմնուած են , մինչդեռ ի Թուրքիա բոլորովին հակառակը կը տեսնուի :

Հոս կան այնպիսի գործաւորներ որք առանձին կտաւի մը կաշակերպութեան համար ոչտք եղած բոլոր գործողութիւնները կը կատարեն , այսինքն մեքենան կը յարդարեն , առէջները կը լարեն , կաթերն եւ օղակները կը շարեն , ասպելէն ասէջը կը վերաբաշեն (բահը) եւ վերջապէս առնելով կ'ընցը կը գործեն թէ' ըլլայ սնդուս թէ' Թաւիլ թէ' տախա եւ :

Իսկ յԵւրոպա հակառակն կը տեսնուի . հոն գործաւոր մի միայն թաւիլ կը գործէ այլոնքն թաւիլին թեզանը միայն կը նետէ . ալ է սանտրն կամ ասպելն առէջ քաշող անձն եւ այլ է թուղթերը ծակողը . նոյնպէս տարբեր գործաւորաց կը վերաբերի օղակները , կարթերը շարել , զլանէ անցընել եւ : Ուրեմն ի Թուրքիա բանուած կերպաս մը երբ երեք գործաւորի ձեռքէ

կ'անցնի, յԵրուսալ գուցէ 10-15 տեսակ գործատուներ կ'այցեւէ. տակէ դիւրին է հետեւեցնել թէ նոցա ապրանքն ալ շատ գե. րազանց պիտի լինի մերինէն. եւ արդարեւ երեւակայեմք գործաւոր մը որ չարաւնակ տարիներով մի և նոյն կիւղն ի ձեռին մի և նոյն ապրանքը կը բանի, այլ եւս նորա ձեւաց մէն մի շարժում կրնանք ըսել թէ մեքենական է և անհամեմատ բարձր այն գործաւորէ որ գործողութիւնը ստէպ փոփոխմանց ենթակայ են:

Ս. Գ. ԿԻՒՄՇԵԱՆ

ԸՆԿԵՐԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐ

ԳՈՐԾԱԴՈՒԼՔ Ի ՄԻԱՅՆԱԼ ՆԱՀԱՆԳՈՒ

ՈՒՍԹԸՐ, 27 Յուլիս

Գործադուլներու եւ պայթիւններու խընդիրը շատ կը յուզուի այս օրերս: «Աշխատութեան ասպետաց» զանազան ճիւղերու շորս հարիւրի չափ ներկայացուցիչք ժողով կազմեցին վերջին օրերս քաղաքի մէջ, որոշելու համար թէ ընդհանուր գործաւորաց վիճակը բարւոքելու եւ ըստ արժանւոյն գոհացուցիչ կարգադրութիւն մը ընելու համար գործադուլ է եւ պայքարի է դուրս ուրիշ միջոց մը գտնել կարելի՞ է թէ ոչ:

Ընդհանուր վիճաբանութիւնը, առաջարկութիւնք եւ թեր ու դէմ տեսնախօսութիւնք եղան երկու օր յաջորդաբար, որով բովանդակութեանը կամ ըսեմք սա եզրակացութեանը հասան թէ արդարեւ թէ գործադուլներ եւ թէ պայքարի ակնկալութեան չափ օգտակար չ'եղան ընդհանուր գործաւորաց դասուն: Թէ ինչ պատճառաւ յուսացածին չափ արդիւնաւոր չ'են առնք հարկ է որ ըսեմք: Դ ցուք թէ կօշկակարի մը գործարանի կաշեգործք (այսինքն այն արհեստաւորք որ կօշիկներու զանազան տեսակ կաշիները կը կտրեն միայն), գործադուլ ընեն՝ թէ՛ ամուսկանի յաւելումով մը կամ թէ՛ ուրիշ զգոհութեան

պատճառաւ. կաշի կարողը, քամողը, ներկողը ևլն. ևլն. բոլորն ալ պիտի ստիպուին դադրեցնել գործերին, որովհետեւ կըտրուած կաշի չկայ որ գործեն կամ գործածեն. յայնմ պարագայի բոլոր գործարանի գործաւորք անգործ և պարապ կը մնան. թէ եւ կաշեգործերէ դուրս միւս բոլոր գործաւորք գոհ էին իրենց վիճակէն: Նմանապէս եթէ գործարանի մը կամ մէկ քանի գործարաններու մէքենավորք գործադուլ ընեն, յայտնի է թէ բոլոր գործարանք կը դադրին գործելէ. աւանկ որ մէկ կամ հարիւր մեքենավորերու պատճառաւ հաշարներով գործաւորք իրենց օրականը կը կորսնցնեն, ակամայ իրենց: Ասի, ինչպէս կերեւնայ պարզ անիրաւութիւն մ'է իրենց վիճակէն գոհ եղող արու թէ էգ գործաւորներու:

Գալով պայքարներու, սոցա գլխաւոր հակառակորդք դատարաններու նախագահող դատավորք են. առարկելով թէ պայքարի ենթարկուած խանութի կամ գործարանի մը դրան երկու կողմը ասպետք գրաւելով թէ դուռնէն մտնող և թէ դուրս ելնող անձինքը համազմամբ, սպառնալով և այլ միջոցներով կարգիլ են առեւտուրը նեւ և այս կերպով գործարանի տիրօջ վընասելէ զատ սոյն գործարանի ընդհանուր գործաւորաց եւս կը մնասին. ուստի ապրէն է ներել Պայքարի դրութեան չարութեան թիւնը: Այս է ահա ընդհանուր դատարանաց կարծիքը պայքարի մասին: Բազմաթիւ աշխատութեան ասպետք տուգանք վճարել եւ կամ բանտարգելութեան դատապարտուեցան արդէն. հետեւապէս այս դրութիւնն ալ մէկդի թողուիլ դատապարտուած է:

Վեց ամիսէ ի վեր Պօսթօնի նշանաւոր դերձակներէ միոյն տանն առջեւ կարմիր դրօշակ ի ձեռին մարդ մը կը շրջագայի, ծանուցանելով յաճախորդաց եւ ճանապարհաց թէ սոյն դերձակ պայքար է եղած է: Դերձակի առեւտուրը բոլորովին դադրած է կըտուի. միւս կողմէն երկու հարիւրի չափ գործաւորք անգործ մնացած են սոյն պատճառաւ որոնց օրական կը վճարէ ասպետաց ընկերութիւնը: Գործապետի մնասը ընդհանուր գործաւորաց դասը կը տուծէ: Սոյն յամառ դերձակ՝ ասպետաց սլա-

հանձնումներուն տեղի տալու գիտաւորութիւն չունի կերեւնայ: Քաղաքիս մէջ տեղի ունեցած ժողովոյ որոշմանց մին սա է է փոխանակ գործադուլ ընելու կամ պայքօթելու՝ Արաբիէի զիմեն երբ դրամատեարց և գործաւորաց մէջ վէճ ծագի: Ասի հետեւեալ կերպով կը գործադրեն:

Երբ վէճ մը ծագի, գործատէրը մէկ մը կ'ընտրէ. գործաւորը ալ ուրիշ մը կ'ընտրեն. այս երկուք միանալով երրորդ մը կ'ընտրեն և նորա կը յանձնեն վէճի ներքեւ եղած խնդիրը. սոյն երրորդի արձակած վըճիւն անդառնալի է. հետեւապէս երկուստեք ընդ ունելու հարկ ն մէջ կը գտնուին, լինի արդար թէ անիրաւ նորա վճիւն: Ասի կարծեմք օրինաւոր մ'ջոյ մ'է կնճռոտ խնդիրներ լուծելու, միայն թէ երրորդի պաշտօն կատարելու յօժարութիւն ունեցող անձնուէր մը գտնել կարելի լինէր: Շատ անգամ պատահած է որ ոչ ոք յանձն առած է գատաւոր կանգնիլ հարուստ զըրամատիրոջ և իւր զիւրադրդիւ գործաւորաց մէջ տեղ. պատճառը յայտնի է:

Աշխատութեան ասպետաց քաղաքիս մէջ ըրած նիստերու ամէն է գլխաւոր ատենախօսք իրենց բոլոր կարողութիւնը երկրին մամուլի դէմ գործածեցին, զանոնք վարձկաններ, դրամատեարց գործիքներ, աղքատաց թշնամիներ հռչակելով. միայն մի բացառութեամբ սակայն եւ այն էր Պօլիս շէքուլ լրագիրը, որուն խմբագրականները չապլ գովեստներով եւ ծափահարութիւններով պսակեցին. (Պօլիս շէքուլ անկողմնակալ եւ նշանաւոր թերթերէ մին է բոլոր երկրին մէջ). ատենախօսերէ մին անհերքելի ապացոյցներով հաստատեց թէ Միացեալ Նահանգաց մէջ լրագրաց մեծ մասը հարուստ դրամատեարց շահուն համար կը հրատարակուին, որոց մէկ մասը յակնէ յանուանէ յիշելէ վերջ առաջարկեց պայքօթել զանոնք: Սոյն ազդարարութեան հետեւեալ օրը քաղաքիս առաջնակարգ լրագիրներու երկուքը հինգ վեց հազարի մօտ ընթերցողէ կը զրկուին. միւս կողմանէ մինչեւ ցարդ անծանօթ և անընչան համարուած Թէլէլը-ճ կոչուած լրագիրը տասը հազարի մօտ նոր բաժանորդ կը գտնէ: Ընթերցողը գիտէ արդէն թէ «ասպետաց» հիմնադիր և երկար ժամանակէ

ի վեր գործադիր իշխանութեան պետն է Բրաուտի անուն մեքենագործ մը, որոյ խորհրդով և զբաւոր հրամաններով միայն տեղի կուենան թէ գործադուլը եւ թէ պայքօթը: Սորա խոչմութիւնը և շրջահայեաց ընթացքը արժանի ըրած են զինքը նախանձելի ժողովրդականութեան, այնչափ որ Նիւ-Յորք նահանգի կառավարչ անուանել իսկ առաջարկուեցաւ իրեն վերջին օրերս, իսկ ինքը մերժեց, զոր կ'ըսուի թէ եթէ ընդունելով քաղաքական ասպարէզ մանէ պարոն Բրաուտի, անտարակոյս օր մը Միացեալ Նահանգաց նախագահի աթոռը պիտի բարձրանայ:

Լրագիրք կը պատմեն թէ աշխատութեան ասպետաց պետն ամէն առաւօտ 4-8 հարիւրի մօտ նամակ կ'ստանայ ընկերութեան 2,400 է աւելի ճիւղերու պետերէ. մէն մի նամակ նորանոր հրահանգներու, կարգադրութեանց եւ կարեւոր ձեռնարկութեանց տրամադրութիւններ պահանջելով, որոց ամէնուն ալ ինքն անձամբ պատասխանելու հարկին ներքեւ կը գտնուի, որովհետեւ դեռ ոչ պաշտօնատեղի ունին եւ ոչ զրազիրներ կան օգնելու իրեն այս մասին: Ասոնցմէ ի գատ, գրեթէ ամէն օր պատգամաւորութիւններ կը ներկայանան իրեն, կամ ինքը կ'երթայ ուրիշ քաղաքներ ընկերութեան կարեւոր խնդիրներու կարգադրութեան համար եւ այս աթիւն կ'ըստիպուի ատենախօսել, վիճել եւ տեղեկադրել, անանկ որ պարոն Բրաուտի յոյժ զբաղեալ անձ մ'է այսօր բովանդակ երկրին մէջ: Բնական է որ իւր բոլոր ժամանակն ընկերութեան օգտին տուող համեմատաբար անուս անձ մը երբեմն սխալներ իսկ ընէ, ինչպէս որ այս վերջին օրերս ընդունած մի պատգամաւորութեան ուղղած ատենախօսութեան մէջ ըրաւ. երբ պատգամաւորութիւնը կը գանգատէր թէ չիլ (չիլէ) չինելու արհեստը շատ յետադէմ վիճակի մը մէջ է, որոյ գործաւորը առ ի ջը գոյէ գործի շատ նեղութեամբ կ'ապրին եւ արժանի են կարեկցութեան: Ասպետաց պետը կը պատասխանէ. «Կը ճանչնամ զիրենք եւ կը կարեկցիմ, անյապաղ ձեռք պիտի առնեմ չիլեգործներու խնդիրն եւ ջանամ լուծել զայն: Նո, կը շարունակէ

պարոն Բրաուտի, ես իմ տունս խմած գա-
րեջրոյ շիշերը բոլորն ալ կը կոտորեմ, որ-
պէս զի շիշեգործերու գործ բացուի . . . »
Եթէ սոյն ծաղրելի խորհրդոց հետեւիլ օգ-
տակար պիտի լինի դործաւորաց դասուն,
կ'ըսէ Պօլսոն. Հերպս, Թոլ ամէն գործաւոր
իւր ձեռաց գործիքները կտարէ, կամ ճա-
շած պիտի վաճառէ. « Պարոն Բրաուտիի
նման զբաղեալ անձի մը ներքին է այս մեծ
սխալ, ի մտի ունենալով թէ ասպետը աշ-
խատութեանց ընկերութեան կազմակեր-
պութիւնն ստացած օրէն ի վեր առաջին ան-
գամն է որ նորա խոհեմ պետն այս կեր-
պով կը սխալի », կը յարէ նոյն լրագիրը :
Վերջին օրերս քաղաքիս մէջ եղած ժողովոյ
առջեւ եւս յուզուեցաւ նոյն խնդիր, ուր
ատենախօսք ունեց ջանացին հաստատել
թէ իրենց պետը դարեջրոյ շիշերը կը կտրէ՞
ըսած չէ այլ պէտք կտրէ՞ ըսած է « եթէ
սոյն միջոցաւ շիշեգործերու վիճակը բար-
ւոքի » : Ասոնց որն որ ըլլայ ճշմարիտ տար-
բերութիւն մը չ'ընենք զի երկուքն ալ տըն-
տեսական օրինաց դէմ են. « Աւերուիմ չէ,
յաւելուիմ է որ ընդհանուրին շահ կ'ար-
տագրէ » կ'ըսէ հեղինակութիւն մը :

Մ. ԹՕՓՃԱՆԷԼԵԱՆ

ԳՐԱԿԱՆ

ՄԱՀ ԵՒ ՄԱՀ

(ԵՐԵՒԱԿԱՅՈՒԹԻՒՆ)

Գարուն
կուգաս գալ տարի, դու զիս կը գտնես
Ո՛չ ի մեր այգին եւ ո՛չ ի պարտէզ,
Ա՛յլ անգա՛րթ քննով հողի տակ պառկած
Գերեզմանաբար մի վրաս կը տեսնես

ՔԱՄԱՌ—ՔԱԹԻՊԱ

Ա.

Մեռաւ :

Մեռաւ Վարդուհին գեռ եւս տասն և
վեցամեայ, իսկ նորա պառաւ մայրն ողբ է
ու կուլայ-կ'արտասուէ իւր վաղամեռ աղ-
ջըկան անկենդան զիակի վրայ : Տակաւին

նոր կ'սկսի գարունը : Բնութեան այս կա-
խարդուհին, որ իեանք կը պարգեւէ ամեն
շնչաւոր եւ անշունչ էակի, մահ կուտայ
խեղճ Վարդուհին : Զիւնն արդէն հալած
է, գետինը չորցած ու պատռած կանա-
չով : Կեռասենիք ծածկուած են ծաղիկնե-
րով եւ ունին ճիւղ այն դիրքը զոր կ'ունե-
նան նորապսակ հարսերն հարսնեկան ըզ-
գեստն հագած միջոցին : Թեթեւ բամբէն
կը թրթռան այդ ծաղիկներն և նոցա ձիւ-
նափայլ թերթիկները բաժնուելով իրենց
պսակներէն, ձիւնի խոշոր հատիկներու
գանդաղ եւ ոլորապտոյտ իման պէս օղա-
կածեւ ծանր ծանր տատանուումով վար կ'իյ-
նան կանաչազարդ եւ հովէն ալեծածան
խոտերու վրայ : Մառերու վրայէն ծաղկանց
թերթիկներ ներս կը թռնին Վարդուհի
սենեակի լուսամուտներէն եւս, ու կ'սկսին
թափթփիլ յատակի վրայ, գազաղի չորս
կողմը :

Արեգակն ինչպէ՛ս գեղաշող կը փայլի
երկնակամարի վրայ, թռչուններն ինչպէ՛ս
փրփրն ու ամսորժալուր կը գեղեցիկ թառ-
եկած ծառոց նորարոգող եւ անուշաբոյր
տերեւներու վրայ : Վարդոց դէմքերն ինչ-
պէ՛ս նկարուած են յուսալիր ժպիտներով
եւ թողած ձմերային դաժան ու խիստ ար-
տայայտութիւնը : Միայն Վարդուհիի դէմ-
քը գունատ է : Նորա մեռելային երեսն ան-
շարժ է ու հանդարտ . իսկ նորա մօր դէմքը
վշտակիր արտայայտութիւն ունի : « Ինչո՞ւ
նա, նա որ գեռափթիթ է, նա որ գեղե-
ցիկ է . . . հեծեծալով եւ խեղդուկ ձայ-
նիւ կը մրմնջէ պառաւն . — Ինչո՞ւ ոչ թէ
ե՛ս, ե՛ս, որոյ ատամները թափած են,
մազերը ձիւնի պէս ճերմկած, մէջքը կորա-
ցած է . . . , ինչո՞ւ ե՛ս ըտ տեղը չը պիտի
գտնուէի, ըո՞ տեղը, աննման Վարդու-
հիս . . . , աչքիս լոյսը խաւարի . . . » : Եւ
ծաղրայեղ վշտակութեամբ իւր խորշոմուտ
ու չոր ձեռներով կ'առնէ կը գրկէ հան-
գուցեալն, իւր չորցած շուրթերը կը հպին
նորա տոգոյն ու մահատիւզ ճակատին . ա-
պա իւր նուաղիւտ կիսաշէջ աչերէն արտա-
սուքը կաթիլ առ կաթիլ կը հոսի եւ կը
թափթփի անբաղդ Վարդուհիի հերարձակ
մաշերու վրայ : Մօր արտասուած կաթիլ-
ները գոտեր մաշերու թելերուն վրայ կե-
ցեր են ճիւղ այնպէս որպէս կը կենան ցօղի

մարդարտածեալ կաթիլները կանաչ սէզլի վերայ, երբ դարնանային առաւօտները դուրս կ'ենէս դիտելու մարդագետնի գեղեցկութիւնը:

Տխուր տխուր կը զօղանջեն զանգերը: Վարդուհին կ'երթայ յաւիտեան ծածկուելու սեւ հողի տակ, իսկ բնութիւնը կը ժպտի, կ'ուրախանայ: Գերեզմանատան մէջ թռչուններն իրենց զուարթագին ձուռողումով կը ձայնակոյն թաղման շարահանին. մանուշակներն ու հովտաց շուշանները, կարծես տեսութիւն ստացած, թույփերու տակէն հետաքրքիր ակնարկով կը նային թէ իրենց մօտ ինչպէ՞ս կը թաղեն Վարդուհին: Նոցա անուշաբոյր հոտը կ'սկսի միանալ խունկի բուրման հետ և կերթայ շօշափել տարաբաղդ աղջկան դեղնորակ և սառն այտերը: Եւ ահա հողը խուլ ձայնով կ'սկսի թափիլ դադաղի մակերեւոյթին, ճիշդ այնպէս որպէս բռնաշունչ հովի ժամանակ տեղատարափ անձրեւն երբեմն խիստ սառտիկ եւ երբեմն բոլորովին թեթեւ եւ գլորեթէ անլսելի ձայնով կ'իջնէ երկրի վրայ: Պառաւ մայրը սրտասպառառ ճիշերով, ապա խեղդուկ հեծկլտանքով երեսի վրայ կը փռուի գերեզմանի վրայ եւ դառն ու ծայրայեղ յուսահատութեամբ կը գրկէ խոնաւ հողն որ յաւիտեանս իւր տակ ծածկած պիտի պահէ նորա սրտի սիրեցեալ մատղաշ էտկը: Տարանուագ կը հնչէ « Հող էիր անդրէն եւ ի հող դարձցիս » եւ բուրուռաւի մուխ վերջին կոհակներն, օդակ օդակ բարձրանալով դէպի երկնից կապոյտը, կ'աներեւութանան անհունութեան մէջ:

Հագիւ հազ բաժնեցին մայրն այն սլաշտեցեալ եւ անիծեալ հողէն ու տուն տարին:

Ամենքը գնացին:

Մնաց միայն զուարթ բնութիւնը մանուշակներու եւ հովտաց շուշաններու հետ, գեռափթիթ տերեւներու սօսիւնի հետ, թռչնոց քաղցր գեղգեղանաց հետ: Միայնակ մնաց լին ու տխրազգեցիկ հողակոյտն ոյր տակ կը հանդչի Վարդուհին: Եւ այդ միջոցին տարօրինակ երեւոյթ մը կը ներկայանայ. ծաղիկներու պսակներէն, ծառերու ոտերէն, կապուտակ երկնակաւաւրէն մարդանման շատ փոքրիկ թեւաւոր էակներ վայր կ'իջնեն եւ ձեռք ձեռքի տա-

լով շրջան կը կազմեն թարմ գերեզմանի չորս կողմն ու կ'սկսին երգել տխրանուագ. նոցա ձայնն սքանչելի է եւ դիւթական, ու կը հնչէ այնպէս պարզ, որոշ եւ քաղցրահնչուն որպէս կը հնչէ արծաթեայ զանգակի ձայն: Թռչուններն իսկոյն կը լռեն, տերեւներն այլ եւս կը դադրին սօսափելէ, հովը կ'իջնէ: Արածես սքանչելի երգն կը դիւթէ եւ հիացումով կը գրաւէ համայն բնութիւնը. կարծես այդ երգի տխուր շնչոտերը կ'աղչեն, կը թափանցեն շնչաւոր եւ միջեւ իսկ անշունչ մարմնոց մինչեւ խորը:

Ծառերու արտօսումով կ'ուռագուի կարմրորակ հողակոյտն, եւ ամեն մի արտօսրի ընկած տեղի վրայ կ'սկսի դուրս երեւիլ խոտի ծիւ մը արծաթափայլ բունով եւ կանաչ թերթիկներով: Տխրազգեցիկ երգի ձայնը կամաց կամաց կը ցածնայ հետզհետէ եւ վերջապէս կը լռէ բոլորովին: Հողակոյտն այլ եւս ամբողջապէս ծածկուած է գեղատեսիլ եւ արեգակի ճառագայթէն փողփողուն կանաչութեամբ: Այս միջոցին փոքրիկ մարդանման էակները դարձեալ կ'սկսին երգել, բայց այս անգամ նոցա ձայնը կը հնչէ բարձր եւ ուրախ: Ուրախափ յայդ շնչոտերը կ'աղչեն համայն բռնութեան վրայ. և, ահա, ամեն ինչ կ'սկսի երգել. կ'երգեն թռչուններն իրենց խորթ ժաւոր ձուռողումով, կ'երգեն մանուշակներն ու հովտաց շուշաններն իրենց անուշաբոյր բուրմամբ, կ'երգեն ծառերն իրենց աններդաշնակ սօսալիւններով, կ'երգէ արեգակն իւր վարդաճաճանչ ճառագայթից շողիւնով: Այս ընդհանուր երաժշտութեան միջոցին ծանր եւ հանդիսական կերպիւ հողակոյտի տակէն կ'սկսի բարձրանալ կանաչագոյն բարակ ցօղուն մը. նեղ եւ երկար տերեւներով, ցօղունի ծայրին կը գլտնուի մի ձիւնափայլ հիանալի ծաղիկ: Վարդուհին է այդ ծաղիկն, որ ծաղկի կերպարանքով լոյս աշխարհ կուգայ միւս անգամ, քանի մը վայրկեանէն յետոյ ընդ միշտ թարաւանալու պայմանաւ, ինչպէս որ առաջին անգամ թարաւանցաւ այն պահուն երբ դեռ եւս նոր կը բացուէր իւր կենաց արշալոյսն... Եւ ինչպէ՞ս թարաւանալ, եւ այս եւս այսպիսի պահուն մը, սոսկալի է, սոսկալի...:

Բ.

Աշուն է :

Անձրեւի կաթիլները սաստկութեամբ կուգան կը զարնուին լուսամուտի ապակիներուն, և կ'երթան շառաչմամբ կ'իյնան ջրակոյտի մէջ : Նոցա անկմամբ վեր վեր կը ցատկին տղմոտ սղօղակներ : Սեւ ամպերը կը ծածկեն համայն երկնակամարը թանձր վարագոյրով որ անթափանցելի է արեգական կենսատու ճառագայթից համար եւս :

Մայլ դահլիճի մը մէջ տեղ դրուած է սեւապատ դագաղ : Դագաղի մէջ Վարդուհի մայրն է : Վարդուհի մահուամբ շիջած էր նորա կենաց վերջին ճառագայթըն : Այնուհետեւ աշխարհ կատարեալպէս դատարկ կը թուէր նմա : Կեանք ըսածդ, այլ եւս, նշանակութիւն չունէր նորա համար : Մինչեւ այժմ թէ եւ կ'էն, դանի մեռեալմ'էր, այսուհետեւ անկենդան մեռեալ մը դարձած էր : աւանդած էր իւր վերջին շունչն : Ոչ ոք կար վրան լացող : Միայն սեւազգեստ ծերունի բահանայ մը մի կողմ կեցած կ'ընթեռնու տխրածայն, կը յօրանջէ եւ կը խաչակնքէ իւր երեսը : Զրագներն աղօտ կերպիւ կը վառին հանգուցեալի շորս կողմն եւ կարմրորակ լոյս մը կ'արձակեն նորա հիւծեալ դէմքի վրայ : Շատ, շատ երկար ժամանակ սարեցաւ նա, ու անթիւ ուրախութիւններ ու վտեր ունեցաւ : Վերջապէս հասաւ ցանկալի վախճանն : Զի լսեր անձրեւի շառաչն, հովի շփվոցն, բահանայի միօրինակ ընթերցումն : արտասուաց ու ժպտներու հետքերն, տառապանաց և երջանկութեան հետքերն, հոգեվարքի տանջանաց հետքերը բուրրովին անհետ եղած են նորա երեսէն, տեղի տալով մահուան անվրդով խաղաղութեան : Հանգի՛ր, հանգի՛ր, հանգիստ :

Կը տանին դագաղն իւր յաւիտենական բնակարանը : Վերէն անձրեւի կաթիլներն անընդհատաբար կը զարնուին դագաղի մակերեւոյթին, իսկ վարէն տղմի ցոյտումները : Գերեզմանի շուրջն ոչ այլ ինչ կը տեսնուին բայց եթէ մերկ ու դեղնած թուփեր և ծառեր, որ տխուր տալաւորութիւն մը կը գործեն մարդու վրայ : Մանուշակներն ու հովտաց շուշանները, թաքնուած

հողի տակ, կը նիրհեն խաղաղ կերպիւ : Գերեզմանի մէջ կը լեցուի ջուրը : Խուլ աղմուկով դագաղը գերեզման կը դրուի : Խոնաւ կաւն ալ միասին կը փրփր կ'իյնայ գերեզմանի ջուրին մէջ եւ ցերի ցայտելով, ամբողջապէս տիզմով կը սլատէ դագաղը :

Թաղեցին պառաւն, ամբապէս տրորեցին խոնաւ հողն, հողակոյտ մը շինեցին ու հեռացան գնացին : Տխրածայն կը սուլէ բամին, ծառերու վրայ մնացած վերջին տերեւները կ'իյնան թարմ գերեզմանի վրայ, ծառերու ճիւղերէն սառցած արտօսը կ'իջնէ հողակոյտին մակերեւոյթին : Սակայն այս անգամ արտօսի ընկած տեղէն երեւան չի գար խոտի կանաչ ծիլը : Տխրածայն կը սուլէ բամին, և կարծես կ'երգէ . « Բընացի՛ր, հանգի՛ր, ապրեցար դու, տանջուեցար եւ ուրախացար, իսկ այժմ հանգըստացիր » : Տխրածայն կը սուլէ բամին, ու կարծես կ'ըսէ . « Թէ եւ դու այլ եւս անգիտակից քո արդի վիճակին, այլ մարդիկ կ'ողորան դայն, նոքա կ'զգան որ դու մի ժամանակ չը կայիր աշխարհիս երեսին, ապա գոյութիւն ունէիր, վայլեցիք կեանքն իւր ամբողջ դառնութիւններով ու բաղցրութիւններով, և յետոյ չիջար յաւիտենան յաւիտենից, եւ կը սոսկան մարդիկ երբ կ'սկսին յիշել թէ իրենք եւս մի եւ նոյն ողբալի բաղլին պիտի վիճակուին օր մը » : Տխրածայն կը սուլէ բամին, եւ նորա սուլումն արձագանք կուտայ տապանաքարերուն եւ մեռելոց գերեզմանը ծածկող հողերուն որ ընդ միշտ անշարժ ու անխախտ պահեն այն փոշին, որ մարդիկ էին երբեմն, մարդիկ որ իրենց մտածումներով կը սրանային տիեզերաց անհունութեան մէջ եւ կը թափանցէին մինչեւ ծովերու անդունդն եւ երկրի կեդրոնն, եւ որք այժմ ոչ այլ ինչ են բայց եթէ մի բուռ հող այն երկրի վրայ որ շատ նեղ կուգար իրենց . . . :

Պ . Տ .

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

ՈՂԲ ՍԻ ԴԺԲԱՂԴ ԿՆՈՉ

Պուլանքայ խարաղըլ գիւղացի « Լա-
ւանդ » անուանեալ մի մարդ երկու տարի
շարունակ ամուսնութեան կը խնդրէ Մա-
նիշակ անուն աղջիկին իւր որդի Կարապե-
տին : Աղջկայ հայրն միշտ կը մերժէ հաւա-
նութիւն տալու : երկուստէք սպառնալիք
տեղի կ'ունենան : Անեցի մի կարճ ժամա-
նակամիջոց եւս , հարսնացուն հօրը կողմէ
նոյն յամառութիւնն : Լաւանդի ճարը հա-
տած կը դիմէ Քրդաց Միրզա-բէկ անուն
ցեղապետին եւ ամէն ինչ նմա յայտնելով՝
կը խնդրէ բռնի առնուլ յիշեալ աղջիկին եւ
իրեն յանձնել : Յեղապետն , կրթի քեդի-
ներն տեսնելով՝ ամենայն իրով յանձն
կ'առնու իւրախ խնդիրը կատարելու : Գիշե-
րայն 25 զինեալ արքանեակներով աղջկան
տան վրայ կը յարձակի մի քանի հրազէններ
կը պարսկէ , հուսկ ուրեմն , աղջկան կամաց
հակառակ , եւ առանց նորա յորդառատ
արտասուաց խղճալու , բաշկաւելով տնէն
դուրս կը հանէ եւ ուղղակի խարաղըլ տա-
նելով՝ Կարապետի վրայ կը ստակէ : վեց
ամիս զինի ահա լուր կը տարածուի թէ
Մանիշակն թունաւորելով իւր այրն մեռու-
ցեր է եւ թէ ինք Մուշ բերուելով՝ շրջա-
յակապ երկոտասանամեայ բանտարկութեան
դատաւարտուեր է : Այս իրողութեան առ-
թիւ յետագայ տողերն ժողովրդոց մէջ կ'եր-
գունին ցաւալի եղանակաւ մը , զորս կը
կարծեն թէ թունաւորուած երկտասարդին
մայրը հեղինակած է :

Ամա՛ն լաօ՛ւ , սիրուն լա՛օ , ա՛յս լա՛օ ,
Սուդ ենք մտեր զէղով տըկով՝² ազի՛դ լաօ ,
ինչե՛ր եղաւ , մեռնի՛մ էտ քու յերկէն բա-
ժի՛ն³ ,
Մակար՝⁴ քա՛ր էր սիրտն զքեզ սպանողին :

Բօյդ պուսուլդ գէղի մէջ մառ⁵ դարձեր
էր ,
Խօշաղութիւնդ ալամ աշխարհ տարածուեր
էր ,

Միկա⁶ որ դու կ'անցնիս կ'երթաս մըր խի-
չէն⁷ ,
Ալ ես կրնամ երկար ապրիլ քու անցմանէն :

Աչերդ սեւ էր , բերանդ պղտիկ , ընթալդ
կամար ,
Ճակատդ պալ⁸ , բօյդ չինէրի բարենպար ,
էտ ճալալիքդ⁹ որ հիւսեցի ըռա՛նկ , ը-
ռա՛նկ ,
Մադ կտրեր էր դեղի ուէսն ու քաւորկանք :

Միթէ Աստուած հըմլա՞¹⁰ գիեր էր փու-
սուլդ¹¹ ,
Էլ ի՛նչ էնիմ աշխրբի փառքն , գուդան ու
արտ ,
Նխշուն օտիդ¹² պատէն կախուած են քու
զէնքեր ,
Չանոնք տեսնան լուրախանա՞ն մեր տուչ-
մուններ :

Հաղար ազպի¹³ մէջ հեռուէն յերկէն բա-
ժովդ ,
Բալի¹⁴ կ'եղնէր , մեռնի՛մ քեզի էտ քու ու-
ժովդ ,
Մէջ Պուլանխա , Քրդ երուն իսկ ա՛հ էիր
տուեր ,
Այժմ որ կ'երթաս՝ մայեամ հոգիդ կ'եղնէ
ի վեր :

Ախըր¹⁵ կիւնէնք¹⁶ զօրպութեանով մը աշ-
խարհի ,
Բան մը իսկի¹⁷ եօլա չ'երթար . ախըր քեզի
Ըսի որ դու ձեռք քաշէիր այդ աղջկէն ,
Ի՛ այդ սեւ տուման չը պիտի անցնէր հիշ
մեր գլխէն :

Բայց դու կ'ըսէր « Իմ մամէ՛ ջան , սըբ¹⁸
Կարապետ վկայ եղնի՛ ,
« Որ սրտիս սիրած , շանիս ուղած նա՛ մի-
այն կ'եղնի .
« Թէ որ խաթրով կամ զօրովէն¹⁹ դայն ինձ
չը բերէ՛ք
« Իրկուն , լուսմութ , ի՛նչ գա՛հ²⁰ եղնի՛ , զի
անպատճառ խեղդած կը տեսնէ՛ք » :

Տունդ աւրի²¹ մայրակա՛ն գուրթ . էտ
խօսից առջեւ
Լեզուս փակաւ . խորթ մայր չէի որ անոր
առջեւ

Օր հաղար անգամ տայի շնորհիւրի ու գր-
րողի 22,
Գնա՛, ըսի, Աստուծոց խնդրեմ՝ գործդ յա-
ջողի:

Հաղար հալով, շատ տուպարով աղջիկն
քաջեցի՛նք մենք բերինք.
Հարսի նիւթ միշտ կախուկ էր. պատճառ
գիտէ՞ք, ի՛մ սիրելիք,
Զի նա փոխան անկեղծ սիրոյ իւր հոգւոյն
մէջ ատելութեան
Սերմեր ցանէր, մահ կը նիւթէր. իրրեւ
վայրի մի գէշ գազան:

Այդ տեսակով անցա՛ւ-չորս, հինգ, վեց,
եօթն ամիս,
Օր մ'աւքնուց նոր ելեր էինք, քնէն տահա
իմ որդիս
Վեր չէր կացեր, շփոթութեան մէջ գլորե-
ցայ.
Եւ վաղով²³ դուռը բացի, սատանայի պէս
մէջն ինկայ:

Կարապետին մօտեցայ, — Շո՛ւտ, քնո՛ւց
եյ, ձայնեցի,
ձուհա՛յ չեղաւ. Կա՛րապետ, է՛վէ 24 կանչի.
Ա՛լ զըմէն²⁵ բան հասկցայ. հարսը օտայէն
փախե՛ր էր,
Իմ քաջ որդւոյն, իմ կտրիճին աղու տուե՛ր
էր:

Ո՛վ Տէ՛ր Աստուած, դո՛ւ որ բաւի ես եւ
առաքինի,
Դո՛ւ որ ատես զգէշն ու չար, լի՛ց՝ իմ էտա
խօսքին.
« Էն աղջիկն որ մեր տան հիմն փլուց, բան-
դեց,
« Էն անխեղձ որ էտ տումանն մեր զխուռն
բերեց,

« Էն թափուր²⁶ մի պալաի հասուս, որ
տնով, տեղով
« Թափին, քօմին. խաթրով, փարով, ա-
ղաչանքով
« Իրանց ետխան չ'աղատէ. անիծէ՛ դայն
Տէ՛ր զօրաւոր,
« Որ իմ սիրտն ալ ըռհաթի... նոյնպէս
հոգիս՝ որ է սեւաւոր... »

Գ. Ս. ՄԱՐԶՊԵՏՈՒՆԻ

6 Հիմա: 7 Քովէն: 8 Լայն և դուրս ցցուած ճակատ:
9 Իրդաձեւ սպիտակ կտաւ՝ որոյ վրայ բանուած են
գոյնգոյն մետաքաներ. երեսասորդք զայդ իւրեանց
նախաբաղի՛ն վրայ կը կապեն: 10 Ամպէս: 11 Ճակա-
տագիր: 12 Սենեակ: 13 Զ'ամուսնացած: 14 Յայտնի:
15 Լրտէն: 16 Գիտէի: 17 Երբէք: 18 Սուրբ: 19 Բըռ-
նութեամբ: 20 Ժամանակ: 21 Աւերի: 22 Հիւանդու-
թեանց անուներ են. 23 Ճապարանք: 24 Նորէն, վե-
րստին: 25 Բողոք: 26 Տեսակ:

Տ Ե Ղ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

Ս Ղ Ե Ր Դ

Հանրօգուտ շինութեան նախարարու-
թեան կողմանէ հոս զրկուած լինելով՝ նա-
խորդ յունիսի սկիզբներն հասայ աստ ի
Սղերդ (ըստ տաճկաց Սէբֆ) որ փոխ-կու-
սակալանիստ բաղաք է, ընդ կուսակալու-
թեամբ Բաղէշի:

Սղերդ շինուած է լեռնադաշտի մը վը-
րայ, որ իւր շրջակայներով թերակղզի մը կը
ձեւանայ հիւսիսէն գէտ ի հարաւ զուգա-
հեռական ուղղութեամբ վազող յարեւելից
Պոհտան և յարեւմտից Արծն գետերէն շըր-
ջապատեալ, որոնք միանալով Տիգրիսը կը
կազմեն:

Քաղաքիս կլիման սաստիկ տաք է ամա-
րան, եւ ի ձմրան դուռն ուրէք կը տեսնուի
աստանօր ձիւն, սակայն ոչ վնասակար, զի
արեւելքէն եւ հարաւէն պատասպարեալ է
եթէ ոչ լեռներով գէթ բլուրներով, որ կը
մեղմացունեն Պարսկաստանէն եւ Արսբիա-
յէն փչող հովերու վնասակար աղդեցու-
թիւնը:

Սակայն քաղաքիս ջուրն ոչ միայն չէ ա-
ռողջարար՝ այլ կարի նուազ. յԱսիական
Տաճկաստան առաջին անգամ է որ կը տես-
նեմ քաղաք մը ուր կը լինի ջրի վաճառու-
կանութիւն, եւ վաճառողք են աղքատիկ
կանայք, որ առօրեայ պատառ մը հացի
դրամ շահելու առթիւ ենթարկուած են կէս
Ժամ հեռաւորութենէ ուսարարձ կուժերով
ջուր կրելու տաժանելի աշխատութեան.
Եւ ի՛նչ աղմուկ անվերջանալի, ի՛նչ ժխոր
բարիւնեան այն միակ աղբեր առջեւ, ո-

¹ Որդի, զուակ. ² Համայն գիւղացիք: ³ Հասակ:
⁴ Մեթէ, արդեօք: ⁵ Խօսակցութեան առարկայ:

որոյ ջուրն յուժմալէս չի վտանգուելու համար ծորակ դրուած է, եւ յորմէ սակայն ջուր ստանալու համար բոլոր օրը խռնուած են անդ հարիւրաւոր կիներ, որ բազկացս եւս կանխատես լինելու համար կը յարուցանեն սոսկալի պատերազմ մի, զէնքի ու վա. հանի տեղ միանգամայն գործածելով իրենց կուժերը:

Չարմանալի է ապաքէն այս մասին տեղւոյս հասարակութեան ինչպէս նաեւ կառավարութեան ունեցած անտարբերութիւնըն, որ երբէք չը խորհիր սոյն անկրօնի վիճակին վերջ տալ, քաղաքիս առատ ջուր մատակարարելու մէկ միջոցը գտնելով, որ չէ անկարելի: Եւ որոյ մասին

Յիշեալ աղբիւրն որի հեռուստ բերուած է, խողովակներով կը մատակարարէ ջուր մարդկանց եւ եթ. Կենդանեաց համար ջուր կը հայթայթուի արհեստական աւազաններով, որ կը լեցուին անձրեւաց ջուրերէն:

Տեղացիներէ իւրաքանչիւրն ունի իւր տան մէջ ջրհոր եւս, որոյ ջուրն անըմպելի է սաստիկ աղիութեան պատճառաւ, եւ կը դործածուի անօթներու լուսցման եւ շինութեանց համար. ի չգոյէ ջրոյ զուրկ է նաեւ քաղաքս մաքրութենէ եւ ծառատաններէ, բայց ունի իւր շուրջն այգիներ, որ կ'արտադրեն աւառ եւ լաւագոյն խողով: Սըղերդ իւր չրջակայիք կազմուած է կրաքարերէ եւ ունի մարմարիոնի առատ հանքեր:

Քաղաքիս բնակչաց թիւը կը հասնի իբր 15 հազարի, որ կը պարուենակէ յինքեան թուրք (մեծամասնութիւնը սորա կը կազմեն), հայ, ասորի եւ քաղկէացի, որոնց կրօնքն է մահմետականութիւն (շանէֆի եւ Շաֆի) եւ բրիտանականութիւն (լուսաւորչականութիւն, պապականութիւն, ասորականութիւն եւ բողոքականութիւն). լեզուներն արաբերէն է առ հասարակ:

Տեղւոյս բնակչաց հագուստի տարազն ալ ոչ նուազ հետաքրքրական է, որ պարսկականի եւ քրդականի խառնուրդ մ'է. գլխարկներն (քիւլահ) շինուած է թաղիքէ, որ ունի առաւել քան 75 սանթիմետր երկայնութիւն եւ զոր կը մեծցունեն զանազան գոյներով եւ ձեւերով մաթթաններու միջոցաւ: Բաճկոններն (ապա) արհեստական կարճ մուշտակ մ'է, որ արտաքուստ ծածկուած է թաւ ու երկար ստեղծերով. անդ. բաժարոթներն (չալվար) ունի տարատի ձեւերէ եւ, սակայն չափազանց լայն ու գոյրըզգոյն նկարներով պատճառեալ: Շապիկներն, բացի տարօրինակ ինչ ինչ ձևերէ, իրենց թեւերու վերջու որութիւններէն ունին ձգեալ մէկ ու կէս մէթր երկայնութեամբ քղանցը-

ներ, իսկ իրենց ստնամասներն թող թէ մեծութեան պատճառաւ երկու ոտք մէկէն նոցա միոյն մէջ կ'արելի է պարունակիլ, այլ անոնց ներքեւը զանազան ձեւերով մեծաքանակ քեւեռներ փակցուած լինելով մէն մի գոյգ կը կշռէ առաւել քան չորս օխտ:

Տեղւոր ժ. զովուրդը թէ՛ նիւթապէս եւ թէ՛ բարոյապէս կը ներկայացնէ յոյժ ստորին ու օխտի վիճակ մի. արհեստք ու սովորովք չեն շեղիւր երբէք իրենց նահապետական շաւղէն: Յոյժ միսիթարական է տեսնել աստ Հայոց Միացեալ Ընկերութեանց եւ կսեռ վարժարաններն, որ տեղւոյս ազգայնոց արգաչատելի վճակն ու ազատագոյն յեղաշրջելու մեծ յոյս կը ներշնչեն մեզ: Հոս հասնելուս պէս նուիրական պարտք համարեցի այցելել նոյն լուսոյ յարկերն, եւ յոյժ գոհ մնացի ակնհաստես լինելով վարժարանաց բարեկարգութեան, ուսանողաց յաջողակութեան եւ յարգելի ուսուցչաց ջանից ու արդեանց: մեծ բան է աղաքէն տեսնել այսպիսի քառասունի մէջ մի բարեկարգ վարժարան եւ զարմանալի է տեսնել արարախոս ամբիոնի մը մէջ մանկանց խումբեր որ կը խօսին զուտ հայերէն եւ այն ալ մարտը՝ ազատ բալորովին օտարաբարձո՞ւ է եւ գաւառաբարձո՞ւ:

Իգական վարժարանն որոյ բացումը կը լինի դեռ հազիւ ութն ամիս, զգալի արդիւնք կը ներկայացունէ. մարդ կը գործունայ երբ տեսնէ դեռաօրի եւ նորեկ օրիորդաց մեծագործներն եւ անոնց հայերէն խօսակցութիւնքն:

Լ. ԹԻՒՆԱՔԱՆ

ՄԱՍԻՍԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ՍՈՒԱԶՄԱԿԵԱԼ ԽՆԴԻՐ			
Թիւ	21.	(Մասիս)	Թիւ 3814)
»	35.	»	» 3828)
»	36.	»	» 3828)
»	37.	»	» 3834)
»	38.	»	» 3832)
»	29.	»	» 3832)

ՓՈՔՐ ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՔ ՄԱՍԻՍԻ

ՏՐԱՊԵԶՈՆ. — Ն. Գ. Խ. — 26 Յուլիս թու. կիր գրութիւններ իւր պարունակութեամբն ընդունեցանք: Հրատարակութեան համար առ. մեզ զրկուած որ եւ է աշխատութիւն կարգի մը կ'սպասէ եթէ սակայն պիտի հրատարակուի. ձեր առաւանդն ալ այս վիճակի մէջ են եւ իրենց կարգին պիտի լցնեն տեսնեն: